ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 26-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի, տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում ստացավ Մայր Աթոռի դիվանապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը:

Ըստ Հայաստանյայց Եկեղեցու առաքելավանդ կանոնադրության՝ դեռևս նախորդ օրը հանդիսավոր կերպով կատարվեց ընծայացու վարդապետի երդման արարողությունը: Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, Տ. Նավասարդ եպիսկոպոս ԿՕՅանի և Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի վկայությամբ Հոգեշնորհ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը «ի ծուներս առաջի եկեալ»՝ Իշման Ս. Սեղանի առջև ընթերցեց եռամեծ վարդապետ Գրիգոր Տաթևացու սահմանած երդմնագիրը, որի տակ ի վկայություն ընծայացուի հոգևոր պատրաստականության՝ ստորագրեցին վերոհիշյալ եպիսկոպոսները:

Հաջորդ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Մայր Տաճարի զանգերի քաղցրալուր դողանջներն ազդարարեցին Ս. Պատարագի սկիզբը և շքեղազարդ թափորը Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ Վեհարանից շարժվեց դեպի Մայր Տաճար: Թափորը Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, «Հրաշափառ Աստուած» շարականի երգեցողությամբ մուտեցավ Ս. Ստեփաննոսի Խորանին, որտեղ կատարվում է եպիսկոպոսական ձեռնադրության առաջին մասը, ուր Նորին Սրբությունն ունկնդիր է լինում «համօրէն ուխտի» վկայություններին:

Խարտավիլակ Գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի «հրամայեա Տէր» հրահանգից հետո պատարագիչ Հայրապետին մուտեցան Հայ Եկեղեցու նվիրապետական կառույցի ներկայացուցիչները՝ դռնապաններ, ջահընկալներ, սաղմոսասացներ, սարկավագներ, քահանաներ: Հնուց եկող ավանդույթով ձևավորված կանոնով՝ եպիսկոպոս ձեռնադրվողի համար վկայություն են տալիս խորհրդանշական կերպով ժողովրդի երկու դասերը ներկայացնող և իշխանք ու ռամիկք անվանվող ներկայացուցիչները: Առաջին դասը ներկայացնում էին ամերիկահայ ճանաչված բարերար Վահագն Հովնանյանը և կանադահայ ազգայիններից Գարեգին Օդաբաշյանը, իսկ երկրորդ դասը՝ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Վարդան Դևրիկյանը և ՀԷԿԼՕՖ բարեսիրական փոխատվական հիմնադրամի տնօրեն Տիգրան Հովհաննիսյանը:

Այս ամենից հետո ընծայացու եպիսկոպոսն աղոթասացություններով և սաղմոսերգությամբ ծնրադիր առաջնորդվեց Ս. Ստեփաննոսի Խորան, ուր Նորին Սրբությունն ընծայացուի հավատո քննության կարգը կատարելով՝ նրան նախ շնորհեց եպիսկոպոսական եմիփորոնը: Այնուհետև Ս. Պատարագը շարունակվեց Մայր Տաճարի Ավագ Խորանին: Ընծայացուն ծնկաչոք դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը, վեր բարձրացրեց ձեռքերը՝ ի նշան բոլորանվեր ծառայության: Ձեռնադրող Հայրապետը «Տէր Աստուած մեր» աղոթքի ընթերցանությամբ մյուռոնաօծ աջով ձեռնադրեց ընծայացուին:

ՀԵՌՈՒԱՐԿՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԺԱՆԱԿՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԱԿԱ ՕՄՏ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՆ ՈՒ ԴԱՍԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂՆԵՐԸ

Հանրապետական գրադարան
Фундаментальная библиотека

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՇՈՒՄ Է ԱՐՇԱԿ ՍՐԲԱԶԱՆԻ ՃԱԿԱՏԸ

Հայաստանի պետական գրադարան

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆ Է ՇՆՈՐՀՈՒՄ
ՆՈՐ ՁԵՌՆԱԴՐՎԱԾ ԱՐՇԱԿ ԱՐԲԱԶԱՆԻՆ

Մոտեցավ ձեռնադրության արարողության ամենախորհրդավոր պահը: Նախ նորընծա եպիսկոպոսը «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» հոգեպարար շարականի հնչյունների ներքո «զձեռս ի վեր առեալ» դարձավ արևմուտք՝ ի հրաժարումն աշխարհական կյանքից, և ապա Ազգիս Ծնորհազարդ Հայրապետը Սրբալույս Մյոռոնով օծեց նվիրյալի ճակատը և աջ ձեռքի բութ մատը: Այդ ընթացքում դպրաց դասի հիասքանչ կատարմամբ հնչում էր «Օծում, զոր հեղեր...» շարականը: Նորին Սրբությունը նորաօծ եպիսկոպոսին հանձնեց եպիսկոպոսական գավազան և մատանի:

Հավարտ ձեռնադրության նորաօծ Արշակ եպիսկոպոսին հայրապետական իր պատգամն ու օրհնությունը ուղղեց Նորին Սրբությունը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Առ զիւաչ քո եւ եկ զկնի իմ»:
(Մարկ. Ժ 21)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, այսօր նվիրական տոնն է Վարագա Սուրբ Խաչի: Մեր հոգիներում վերստին բարձրացնում ու փառաբանում ենք մեր Տիրոջ Սուրբ Խաչը, որով ունենք փրկություն ու կյանք:

Քրիստոսի Խաչափայտի մասունքը, որը Սուրբ Հռիփսիմեն բերեց Հայաստան, դարեր անց հայտնվեց աղոթասեր ճգնակյացներին, և հաստատվեց Վարագա Սուրբ Խաչի հիշատակը մեր Եկեղեցում: Վարագա Խաչի ճանապարհը մեր ժողովուրդը դարձրեց ուխտավորի ճանապարհ, քանզի խաչի խորհրդի մեջ գտել էր իր հոգու լույսը, իր կյանքի սերն ու զորությունը: «Առ զխաչ քո եւ եկ զկնի իմ» Տերունական պատվիրանին միշտ հավատարիմ եղավ մեր ժողովուրդը, և խաչը լուսավորեց պատմության մեջ նրա դժվարին ուղին:

Խաչի տոնի խորհուրդը, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, հրավեր է հավատքի ու նվիրումի զորացման, հրավեր՝ ծառայական մեր ուխտի նորոգության առ Աստված և առ Եկեղեցին Հայաստանյայց: Մեզ համար մեծ մխիթարություն է, որ Վարագա Սուրբ Խաչի տոնի ուրախությանն այսօր գումարվում է եպիսկոպոսական ձեռնադրության ուրախությունը: Սուրբ Խաչի տոնի լուսափայլ ու հաղթական խորհրդի հետ միաշաղախ Միածնաէջ մեր Մայր Տաճարում ձեր աղոթքների ուղեկցությամբ կատարեցինք եպիսկոպոսական ձեռնադրություն՝ եկեղեցական բարձր իշխանության հետ առավել ծառայության կոչելով մեր Եկեղեցու նորաօծ եպիսկոպոսին: Փառք Տիրոջը, որ հաղթական ու պայծառ է մեր բազմադարյա Սուրբ Եկեղեցին և այսօր վերաձայնում է իր սպասավորին.«Առ զխաչն եւ եկ զկնի իմ»: Հիրավի, յուրաքանչյուր ձեռնադրություն հոգեգալուստ է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կյանքում և շնորհաց հեղում «ի շինութիւն եւ ի բարեկարգութիւն Սրբոյ Եկեղեցւոյս մերոյ»:

Մեր հայրերը պանծալի և գերահռչակ հանդես են անվանել եպիսկոպոսական ձեռնադրության արարողությունը, քանզի եպիսկոպոսն առաքելական հաջորդությամբ կոչված է վերակացուն և տեսուչը լինելու Եկեղեցու և քաջամարտիկ ջատագովը ուղղափառ դավանության՝ համաձայն մարգարեի խոսքի. «Որդի մարդոյ, դէր կացուցի քեզ ի վերայ ժողովրդեանս» (հմմտ. Եզեկ. Գ 17): Կոչված է եկեղեցական բարձր իշխանությամբ, մաքուր վարքով, անբիծ հավատքով, անկաշառությամբ հովվելու բանավոր իր հոտը:

Ամեն անգամ, երբ հոգևոր, առավել ևս եպիսկոպոսական աստիճանի շնորհմամբ եկեղեցական ենք ծառայության կոչում հոգևոր մեր անդաստանից ներս, մխիթարությամբ զգում ենք Տիրոջ զորակցությունը Մեզ, քանզի ականատես ենք մեր եկեղեցվո նոր զարթոնքին և հավատում ենք, որ Սուրբ Էջմիածնի Մյուռոնով դրոշմված նվիրյալ հոգիներ պիտի լծվեն Սուրբ Էջմիածնի շինությանն ու պայծառությանը, հավատում ենք, որ Սրբալույս Մյուռոնով օծումը նոր կորով, նոր եռանդ ու քաջամարտություն պիտի պարգևի ընծայյալին:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, այսօր եպիսկոպոսական իշխանության ծանր, պատասխանատու, բայց և քաղցր լուծը կրելու կոչվեց Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Արշակ եպիսկոպոսը ծնվել է Հայաստանում Ոսկեհատ գյուղում, միջնակարգ կրթությունը գյուղի դպրոցում ստանալուց հետո՝ ուսանել է Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում: Գերազանց առաջադիմությամբ ավարտելով Ճեմարանը, 1997 թ. ձեռամբ հոգելույս Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի ստացել է կուսակրոն քահանայության աստիճան: Եղել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիրը, վարել է այլ պաշտոններ և 2001 թ. ի վեր Հայրապետական մեր տնօրինությամբ իրականացնում է Մայր Աթոռիս Դիվանապետի պարտականությունները: Նույն տարում Արշակ եպիսկոպոսին շնորհվել են մասնավոր վարդապետության չորս աստիճանները: Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոսը ներկայացնում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ՀՀ Ազգային Ժողովում որպես ներկայացուցիչը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Սրբազանին Մենք առավել ճանաչեցինք Մայր Աթոռի Դիվանապետի պաշտոնում վերջին չորս տարիներին նրա արդյունաշատ ծառայության ընթացքում: Մենք բարձր ենք գնահատում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և Սուրբ Էջմիածնի հանդեպ Սրբազանի որդիական նվիրումն ու նախանձախնդրությունը, որոնք, վստահ ենք, առավել ևս պիտի զորանան շնորհաբաշխ այս ձեռնադրությամբ: Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որ Տերը օրհնի և առաջնորդի Սրբազանին իր ծառայության ճանապարհին, պարգևի երկնային իմաստություն, որպեսզի կարողանա իր կյանքը ապրել և փառավորել բարի ու ազնիվ, հայրենաշեն ու եկեղեցաշեն իրագործումներով:

Սիրելի հայորդիներ, այսօր մեր հիշողության մեջ արթնանում են այն խոսքերը, որ քսանմեկ տարիներ առաջ սրբազնասուրբ այս խորանի վրա Մեր եպիսկոպոսական ձեռնադրության առիթով արտասանեց երջանկահիշատակ Վազգեն Առաջին Հայրապետը. «Սրբազան բառին դեռևս վարժված չեք դուք երևի,– ասաց,– բայց հաճելի է ինձ առաջին անգամ դիմել ձեզ Սրբազան իմաստալից բառով»: Այո՛, սիրելի Արշակ Սրբազան, հետայսու Դուք Սրբազան վսեմ կոչման կրողն եք լինելու, հե-

տևաբար Ձեր կյանքի ու ծառայագործության ճանապարհին պետք է լինեք իսկապես սուրբ և մաքուր ձեր մտածումներով, ձեր ապրումներով, ձեր աշխատանքով, ձեր ծառայությամբ՝ համաձայն Պողոս առաքյալի խոսքի. «Չի պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, որպէս եւ Աստուծոյ տնտեսի, մի՛ յանդուգն, մի՛ բարկացող, մի՛ թշնամանող, մի՛ հարկանող, մի՛ զօշաքաղ, այլ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ, վերակացու լինել, հաւատարիմ բանին վարդապետութեան, զի կարող իցէ և մխիթարել ողջմտութեամբ վարդապետութեանն եւ զհակառակորդսն կշտամբել» (Տիտոս Ա 9): Արդարև, Պողոս առաքյալի պատգամի համաձայն, ով եպիսկոպոսության է ձգտում, ձգտում է բարի գործերի, որի լրումն է Տերունի հրավերը՝ ով կամենում է Իմ ետևից գալ, թող իր խաչը վերցնի և գա Իմ ետևից: Այս պատգամով և հորդորով հայցում ենք Բարձրյալի հանապազ օրհնությունն ու զորակցությունը Ձեզ, որպեսզի հավատարիմ մնաք եպիսկոպոսական ձեր ուխտին, նույն նվիրումով ու նույն սիրով շարունակեք Ձեր բարի ծառայությունը բերել՝ ի պայծառություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Ձեռնադրության այս գեղեցիկ և ուրախ առիթով մենք շնորհավորում ենք մեր Եկեղեցու ողջ հոգևոր դասին, մեր բարեպաշտ հավատացելոց և մաղթում, որ Աստված բխեցնի Հայ Եկեղեցու ծոցում շնորհառատ նոր հոգևոր սպասավորներ, ովքեր պիտի գան իրենց կյանքով և գործով փառավորելու անունը Հոր, Որդու և Սուրբ Հոգու:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի մէնջ. ամէն»:

Սուրբ Պատարագից հետո Մայր Աթոռի սեղանատանը հյուրերի և միաբանների մասնակցությամբ տեղի ունեցավ տոնական հյուրասիրություն, որի ընթացքում էլ Վեհափառ Հայրապետն Արշակ Սրբազանին հանձնեց եպիսկոպոսական պանակեն:

Ձեռնադրությանը ներկա էին մեծ թվով հավատացյալներ, որոնց շարքում նաև՝ ճանաչված մտավորականներ, ակադեմիական և համալսարանական գիտնականներ ու դասախոսներ, Ազգային Ժողովի պատգամավորներ, սփյուռքահայ ազգային-հասարակական գործիչներ և բարերարներ:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությունը և ուսանողությունն ի խորոց սրտի շնորհավորում են Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանին՝ մաղթելով հոգևոր ծառայության ընթացքում նորանոր ձեռքբերումներ և նվաճումներ: Թող Աստուծո Հովանի Աջը պահի և պահպանի Հայ Եկեղեցու նվիրյալ սպասավորին՝ պարգևելով քաջառողջություն և երկար տարիների կյանք:

ՀԱՅԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԲԱՐՄԵՂՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ - «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է ամսագրի նախկին խմբագիր Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանին եպիսկոպոսական ձեռնադրության առիթով՝ ուրախ լինելով, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն Արշակ Սրբազանն իրեն բնորոշ կորովով ու նվիրումով այսուհետև ծառայելու է եպիսկոպոսական բարձր աստիճանով և իշխանությամբ: